անզգայ կերպով քնած էի. այս դրութեան մէջ նա կարող էր իմ ձեռքերը, ոտքերը կապել եւ միանգամայն, «պլոկել» ինձ: Յետոյ նա իր ճարպկութիւնը կը յայտնէր Կարօյին եւ ինձ կ'ամաչցնէր նրա ընկերների մօտ եւ այլն: Ինձ թէեւ շատ ախորժ չէր լսել այս բոլորը, որով վիրաւորում էր նա իմ հպարտութիւնը, բայց դարձեալ ես չէի կարողանում զսպել իմ ծիծաղը, երբ նա խիստ հեգնական սրախօսութիւններ էր անում իր պատմութեան մէջ: Հայրը նոյնպէս ժպտում էր, եւ շոյելով դստեր մազերը, ասում էր՝ «փոքրիկ աւազակս»: Բայց Մարօն ծռոեց դէպի իմ ականջը, կամաց ասաց.

— Դու խօ չե՞ս բարկանայ իմ հանաքներով, Ֆարհատ:

Ընթրիքից յետոյ որսորդը գտնւում էր հոգու լաւ տրամադրութեան մէջ. նա սովորականից աւելի ուրախ էր, եւ ծխելով իր չիբուխը, անդադար խօսում էր այն անցքի վրայ, որ այն օր պատահել էր: Ահա նրա պարունակութիւնը:

Կարօյի խումբը ծերունի որսորդի առաջնորդութեամբ գնում էին Բարդուղիմէոս առաքելոյ վանքը, ուր վանահօր հետ պէտք էր մի քանի կարեւոր իրերի մասին խորհրդակցել: Նրանք անցնում են Հասբստանու սարերով, ուր արածում էին հոտերը մի հայաբնակ գիւղի, որ շատ հեռու չէր արօտատեղից: Յանկարծ լսում են աղմուկ, աղաղակ, եւ հովիւները կոտրած գլուխներով, արիւնաշաղախ, վազում են նրանց մօտ, յայտնում են՝ թէ քրդերը թալանեցին հոտերը, եւ խնդրում են օգնութեան հասնել: Կարօն իր ընկերների հետ շտապում են դէպի այն կողմը, որ ցոյց են տալիս հովիւները: Բայց դեռ հոտերին չհասած, տեսնում են՝ գիւղացիք ետ են դառնում, բոլորովին յուսահատած եւ իրանց կայքը կորցրած: Նրանք յայտնում են՝ թէ ամենայն ջանք իզուր էր, որովհետեւ աւազակներն իրանց աւարով արդէն անցել էին այս եւ այն սարը, որոնցից միւս կողմը հետամուտ լինել անկարելի էր, որովհետեւ նրանք արդէն գտնւում էին իրանց սահմանի մէջ, որ բոլորովին անմատչելի էր: Կարօն հովիւներից տեղեկացած լինելով, թէ որ ժամին սկսոեց թալանը, յայտնում է ոչխարների տէրերին, թէ դեռեւս յոյս կայ աւարը ետ դարձնելու, որովհետեւ աւազակները ոչխարների դանդաղ քայլերով չէին կարող անցնել այնքան ճանապարհ, մի այնպիսի կարճ միջոցում: Եւ աւելացնում է, թէ իրան, Կարօյին, լաւ ծանօթ էր այն սարերի դիրքը, նա գիտէր մինչեւ անգամ ամենաաննշան շաւիղները, եւ խոստանում էր տանել նրանց կարճ ու կտրուկ ճանապարհով, համոզում էր գիւղացիներին իր հետ գնալ: Իսկ այդպիսի դէպքեր խեղճ գիւղացիների կեանքում առաջին անգամը չլինելով, նրանք չեն համոզւում եւ արտասուալի աչքերով դիմում են դէպի իրանց տները: